Դաւիթ զսուփրէն ծալից, բեարհաւից, իտի դէն, տեսաւ քեառսուն չիլախ[1]) թուր գեոյ սուփրի տակ. սուփրի տըկէն զքեառսուն թուրն էլ առից, ծալից՝ ինչ զթուղթ ծալիս. ծալից, էթալ ձիու թորբէն[2]), էսաց.—Տանիմ, տ'էնիմ իմ ձիու նալը բզմար, տարին բաս ը։

Էն քեառսուն փալիւան շատ վախացան, շատ տրտման։

Դաւիթ էսաց.—Կ'ուզէք, կանչիմ, խաց բիրիմ, տիւ էլ կիրէք։

Ասին.—Ջանմ, ինչ տիւ կերար, մինք կշտացանք։

Էսաց.—Իմ էսած բան որ տիւ ասէք, Աստծու անուն տէք[3]), ամէն վըխտին[4]) կ'կշտանէք։

Ասին.—Մինք չինք թըղնը միր չ'աստուած, քիւ Աստըծու անուն տայ։

Էսաց.—Որ տիւ Աստըծու անուն չէք իտայ, իս չըմ թըղնը Աստըծու պաշտող տիւ առնէք, իս տ'առնիմ (Խանդիւթ խաթիւն աստուածապաշտ էր, կռապաշտ չէր)։

Խանդիւթ խաթիւն լսաւ ձէն, էկաւ. էկաւ, էսաց.—Դաւիթ՝ տիւ Է՞լ Աստուած կ'պաշտիս։

Էսաց.—Խա՛.

Որ էսաց «խա», խասաւ Դաւթի գլեոխ պագնից. որ Դաւթը գլեոխ պագնից, էն քեառսուն մարդ շատ ըռըկան. որ կէր՝ տաս տարով էր իկի, որ կէր՝ խինգ տարով էր իկի, որ կէր՝ իրիք տարով էր իկի. Խանդիւթ Խաթընին խզմաթքարուլթին կ'էնին ուրինց խացով, ջրով, Խանդիւթ խաթուն որու խաւնէր[5]) էնի կ'առնէր։

Խանդիւթ խաթուն էսաց.—Իմ խէր, իմ ախպէրն էլ կռապաշտ ին, էսաց, համա իս էտու ջըհըլթինին[6]), էտու կտրըճուլթինին, էտու մալին թմահ չ'էրը, իս էնու Աստըծուն թմահ էրը. էնու ճակատ պագըցը, տ'առնիմ։

—Ա՜յ Դաւիթ, էսաց, քիւ նշան ինչ կը, որ աստուածապաշտ իս։

---

[1]) Մերկ։ [2]) Տոպրակ։ [3]) Տաք։ [4]) Ժամանակ։ [5]) Հաւանէր։ [6]) Երիտասարդութեան։